

ՀՈՎՈՒԱԿԱՆ ԶԵԿՈՅՑ  
ՆԵՐԿԱՅԱՑՈՒԱԾ ԾԻՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆԴԱՄԱԿԱՆ  
ԺՈՂՈՎՔԻՆ

-1961-

Սիրելի Ծիմական Անդամներ,  
Շնորհիւ եւ ողորմութեամբն Ամենակալ ին, Ս. Յովհաննէս Մկրտիչ  
Եկեղեցիս Տիթրոյթի, քոլորեց տարի մը եւս, լի բարի գործերով եւ  
օրէնութիւններով։

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆԴԱՄԱՑՈՒՐՔ

1961-ի ընթացքին Եկեղեցւոյս տրատու անդամներու թիւը հասած է  
1207-ի։ Այս թիւը կը պարունակէ 53 յաւելեալ ընտանիքներ որոնք  
իբրեւ նոր անդամներ արձանգարուած են Եկեղեցւոյս՝ նոյն տարուան ըն-  
թացքին։ 1960-ի Ծիմական Անդամական ժողովին համաձայն տարեկան ան-  
դամատուրքի նուազագոյն սակը 10 տոլարէն բարձրացուած էր 15 տոլարի։  
Նախ քան այս որոշման գործադրութիւնը, 1959-ի ընթացքին, սոյն 10  
տոլարի գումարէն 7 տոլարը կը դրկուէր Առաջնորդարան, անդամ գլուխ,  
իբրեւ թեմատուրք կամ աթոռատուրք, ըստ 1958-ի թեմական Պատգամաւորա-  
կան ժողովի (Երեսփոխանական ժողով) անցուցած որոշման։ Ըստ այսմ,  
ծուխիս Առաջնորդարանին վճարած թեմատուրքին ընդհանուր գումարը կը  
հասնէր մօտաւորապէս 9 հազար տոլարի, ծուխիս անդամներուն մեծագան-  
գւած թիւին համեմատաբար։ 1961-ին, Պոսթոնի մէջ կայացած թեմական  
Պատգամաւորական ժողովը փոխեց թեմատուրքի վերոյիշեալ անդամ գլուխ  
7 տոլարի սկզբունքը եւ որդեգրեց մեր ծուխի պատգամաւորութեան տարած  
նոր առաջարկը, ըստ որում իւրաքանչիւր ծուխի թեմատուրքի բաժնեչափը  
պիտի ըլլար Առաջնորդարանի տարեկան պիտնէին ծուխի րու դրուած համե-  
մատական եւ արդար բաշխումով։ Թէեւ որդեգրուած այս նոր սկզբունքը  
զգալ ապէս թեթևեցուց ծուխիս ծանր բեռը, բայց եւ այնպէս մեր տեղական  
պարտաւորութիւնները նորանոր պահանջքներու դիմաց, հասաւ այնպիսի  
համեմատութիւններու, որ այլ եւս անդամատուրքի մեր հին մեթուները  
բոլորովին անգործնական կը թուին ըլլալ, եւ հիմնովին վերատեսութեան  
ենթարկելու ենք զանոնք։ Ի տես արդիական պահանջքներու, այսու կը  
յանձնարարենք այս պատկառելի ժողովին որ կարեւորութեամբ նկատի առ-  
նըւի այս պարագան, եւ Եկեղեցւոյս տրատու անդամներու նիւթական մաս-  
նակցութեան շաբաթական Բլէժին նուազագոյն քանակաշը իւրաքանչիւր ըն-  
տանիքի համար (այրեւ կին), ընդունուելու է շաբաթական 1 տոլար, որ  
կը նէ տարեկան 52 տոլար։ Այս գումարը մեծ պահանջք մը չէ, եթէ բաղ-  
դատելու ըլլանք տարբեր յարանուանութեանց պատկանող անդամներու իրենց  
պատկանած Եկեղեցիներուն վճարած գումարին հետ, որը միշտ տարեկան  
100 տոլարէն վեր է եւ իրենց պատրաստած ընտանեկան պիտին կարեւո-  
րագոյն տեղը կը գրաւէ։ Այլ ապէս կարելի չէ խօսիլ արդիշկան պահանջք-  
ներու եւ անոնց գոհացման շուրջ։ Գաղտնիք մը չէ որ Եկեղեցի մը որ-  
քան աւելի զօրաւոր ըլլայ, այնքան աւելի ազդու կերպով կը կատարէ իր  
պարտականութիւնը։ Խսկ ասոր փոխադրէ ակներեւ է։

Տիթրոյթի մեր ծխական համայնքը մեծագոյնն է Հիւսիսային Ամերիկայի  
մեր Առաջնորդական վիճակին, ըստ իր չափին, թիւին եւ կարել իութեանց։  
Մեծամասնութիւնը անդամներուն կը բնակի մօտաւորապէս 30 մղոն տարա-  
ծութեամբ շրջագծի մը մէջ։ Եւ շարունակական տեղափոխութիւնը մեր  
հայ համայնքին, առիթ չի տար որ զօրաւոր կերպոնացում մը ստեղծուի  
սա կամ նա շրջանին մէջ, ինչ որ անցեալ ին պատահած է։ Առ նուազն  
10 հազար Հայեր, Մեծագոյն Տիթրոյթի շրջանին մէջ, կակնկալեն ստանալ  
իրենց հոգեւոր մատակարարութիւնը մեր Եկեղեցին։ Ներկայիս Եկեղեցւոյս  
հասցէներու ընդհանուր թիւը կը հասնի 1700-ի։ Թայտնի է որ Եկեղեց-  
ւոյս անդամակցութեան կարողական ուժը կը հասնի մեծագոյն չափերոււ

Ի տես այս կարողականութեան, կը յանձնարարենք դարձեալ որ անդամարշակի գերզօր ճիգեր չի խնայուին բնաւ, եւ ցարդ եղածներէն աւելի կազմակերպեալ, աւելի կորովի եւ աւելի հեռատես աստիճաններու վրայ յառաջ տարուին անդամարշաւի յատուկ մեր աշխատանքները:

### ՀՈՎՀՈՒԹԵՆԻ

Ծկեղեցւոյս զոյգ Հովիւները Արժ. Տ. Առնակ ՔՀՆՅ. Գասպարեան եւ Արժ. Տ. Տիրան ՔՀՆՅ. Փափակեան գործակցեցան իրարու եւ կատարեցին իրենց Հովուական պարտականութիւնները Համերաշխաբար, յօդուտ Սուբբ Եկեղեցւոյս պայծառակի Եթեան, Վիճակին Եկեղեցական դասուն նուազութեան պատճառակ, 1961-ի ընթացքին Եւս Առաջնորդարանի անօրինութեամբ շարունակուեցաւ Միջին-Արեւածան շրջանի Մերձակայ եւ Հեռակայ ան-Հովիւնացած ծուխերու Հոգեւոր մատակարարութիւնը զոյգ Հովիւներու սկզբանէ: Տ. Առնակ ՔՀՆՅ. Եղաւ Այցելու Հովիւն Գլիկլէնտի Համայնքին ու ամսական Հերթական այցելութիւններ տուաւ, շաբաթավերջ մը, (ուիթ-էնտ), ծուխին մէջ անցնելով Խոհ Տ. Տիրան ՔՀՆՅ. Եղաւ Այցելու Հովիւն համար Սէյնթ Լուիզի Ս. Շողակաթ Եկեղեցնոյ, անցնելով ամիսը շաբաթ մը, Սէյնթ Լուիզի Համայնքին մէջ, Բարեբախտաբար կարելի Եղաւ նորապսակ Հովիւն մը նշանակել, յանձին Արժ. Տ. Արտէն ՔՀՆՅ. Պարսամեանի, Ուօքիկանի Ս. Գէորգ Նորակազմ Համայնքին, որ մասմաք մը մեր արտաքին այցելութեան յաճախակիութիւնը նուզեցուց, նկատելով որ այս վերջին ծուխին եւս Հոգեւոր մատակարարութիւնը վստահուած էր Տիթրոյթի Հոգեւոր Հովուաթեան, ըստ որում Տէր Տիրան ՔՀՆՅ., իբրեւ Այցելու Հովիւն, ամիսը Եկու շաբաթ կանցնէր այդ ծուխին մէջ, նորակազմ Համայնքին կազմակերպչական գործերուն նուիրուելով: Այս այցելութեանց հետ մէկտեղ, Տէր Առնակ ՔՀՆՅ. իբրեւ ընտրեալ անդամ թեմական նորհուրդին, պարտաւորուած էր այցելել նաեւ Սիւ-Ենորկ, թեմական նորհուրդի ամսօրեայ նիստերուն մասնակցելու համար: Այս ամսօրեայ նիստերուն մասնակցելու համար:

### ՊԱՇՏԱՄՈՒՆԻ

Ս. Պատարագ մատուցուած է անհափան տարւոյն բոլոր: Կիրակիներուն, նաեւ տօնական այլ օրերու, ինչպէս Ս. Ստեփանոսի օրը, (Դեկտ. 25), Ս. Ծննդեան եւ Աստուածայայնութեան տօնին (Յունուար 6), Վարդանանց օրը (Փետրուար 9), եւ Աւագ Հինգշաբթի (Մարտ 30):

Պաշտամունքի յատուկ արարողութիւններ կամ ժամերգութիւններ կատարեած են նաեւ զանազան այլ առիթներով, ինչպէս Արեւագալի արարողութիւն Մեծ-Պահոց Զառաւոնորդաց Կիրակիներուն, Հովուամի արարողութիւննաղաղական եւ Հանգստեան ժամերգութիւններով Մեծ-Պահոց Զորեքշաբթի գիշերները, Ամերիկեան ԲՐԻՄՄԸ-ԻՎԻ: յատուկ պաշտամունք մը Անգլերէնով (Դեկտ. 24), Աւագ Շաբթուայ տօնակատարութեանց յատուկ արարողութիւնները, որոնցմէ Աւագ Ուրբաթու Խաչելութեան կարգը կատարուած է Անգլերէնով, ի պէտս նորահաս սերունդին, Կիրակնօրեայ վարժարանի Կիրակնօրեայ պաշտուամունքի արարողութիւնները, եւ վերջապէս մասնաւոր պաշտամունքի արարողութիւններ Եկեղեցական ամսօրեայ անդամական ժողովներուն առթիւ:

Ս. Պատարագ ները մատուցուած եւ քարոզները տրուած են փոխն ի փոխ զոյգ Հովիւներու կոզմէ, իսկ արարողութիւնները եւ ժամերգութիւնները պաշտուած են միասնաբար: Պատահաբար քարոզներ տրուած են նաեւ Անգլերէնով, ի պէտս նորահաս սերունդին: Քարոզնօսութեան մէջ վայելած ենք նաև աշակեցնութիւնը Եւսոն Աւագ Մարկ: Զէնեանի, զոյգ լեզուներով:

Ապրիլ 24-ի նահատակաց սգատօնին առթիւ, եկեղեցւոյս մէջ նահատակաց յիշատակին յատուկ Հոգեհանգիստ տեղի ունեցած է եւ ապա մատադօրնուելով բաժնուած է հաւատացեալ ժողովու ըդին:

Բ. Տարեկան բացօղեայ Պատարագը եւ Խաղողօրհնէքը Աստուածածնայ Վերափոխման առթիւ, Օգոստոսին, կատարուած է Սթէյթ-Ֆէր-Կրաունտի վայրին մէջ հանդիսաւորապէս, եւ որուն հետեւեցաւ Երկրորդ տարեկան մեծ բիթնիքը (զբօսահանդէս): Նաեւ կատարուեցաւ չայ Վէթէրաններու տարեկան մատադօրհնութիւնը եւ մեզմէ յաւէտ բաժնուած Վէթէրաններու Հոգեհանգիստը, նոյեմբերին:

Մեր պաշտամունքին մասնակցող իբրեւ քարոզիչ կամ պատարագիչ, տարւոյն ընթացքին հիւր եկեղեցականները եղած են, Առաջնորդ Սիոն Սրբազն, Տիրան Սրբազն, Հայկասէր Վարդ, Պայրամեան (Երուսաղէմէն դէպի Գալիթորնիայի իր նորահաստատ պաշտօնատեղին երթալու ճամբուն վրայ), եւ Շահէ Վարդ, Աճէմեան, Երուսաղէմի Պատրիարքութեան դիւնապետը: Բացի ասոնցմէ, մեծ թիւով այցելու եկեղեցականները եւ Քահանայացու ուսանող սաններ իբրեւ հիւր ունեցած ենք ծուխիս մէջ, Դպրաց Դասերու Համաժողովին առթիւ որ 1961-ի ամրան տեղի ունեցաւ Տիթրոյթի մէջ: Այդ առթիւ իբրեւ պատարագիչ ունեցած ենք Թորգոմ Վարդ, Մանուկեանը եւ իբրեւ քարոզիչ Սիւոսն Վարդ, Կրճիկեանը, Առաջնորդական Փոխանորդ:

#### ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆ ԵՒ ԽՈՐՀՐԴԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆ

1961-ի ընթացքին 108 Մկրտութիւն կատարուած է որ կը պարունակէ 1 հատ չափահասի մկրտութիւն: 7 հատ դրոշմ կատարուած է առանձինն, քանի մը նշանախօսութիւն եւ 22 հատ ալ Պսակադրութիւն կատարուած են: Թաղումներու թիւը եղած է 50, որոնցմէ ամբողջութեամբ եւ կամ մասամբ ՓՈՒՆՆ-ԾԱՂԿԵՊՍԱԿԻ նուիրատուութիւններ յատկացուած են նոր եկեղեցւոյ կառուցման հիմնադրամին:

Գերեզմանօրհնէք կատարուած է Մէսօրիսլ Տէթին, եւ այլ առիթներով, ըստ ներկայացուած պահանջմքին:

Ս. Ծնունդի եւ Ս. Զատկի զոյգ տաղաւարներուն Ս. Հաղորդութիւն մատակարարուած է Կիրակնօրեայ Վարժարանի աշակերտաց, մասնաւոր պաշտամունքի արարողութեամբ մը:

Զանազան Օժանդակ Միութեանց նորընտիր վարչական անդամներ հաստատուած են իրենց պաշտօններուն մասնաւոր ընծայման եւ ուխտառութեան արարողութիւններով:

Փետրուարի մէջ կատարուած է մասնաւոր Հոգեհանգ ստեան պաշտօն, 1960 տարւոյ ընթացքին համայնքիս մէջ բոլոր մահացողներու ի յիշատակ:

#### ՀՈՎՈՒԱԿԱՆ ԱՅՑ

Հովուական այցին մէջ կը պարունակուին Հիւանդաց այցը հիւանդանոցներու մէջ, սուգի առթիւ ընտանիքներու տրուած միիթարական այցը, Տընօրհնէքը, Հովուական խորհրդատուութիւնը զանազան խնդիրներու լուծման կապակցութեամբ եւ նաեւ Հովուական այցեր որոնք կը տրուին ընկերային եւ այլ նպատակներով, մասնաւոր առիթներու: Այցելութիւններ տրուած են նաեւ բնակարաններէ զատ գործատեղիններ: Այս բոլոր տեսակի այցերն ալ նկատուած են կարեւոր մեր կողմէ, եւ այցելութիւնները եղած են բնականաբար որքան որ ժամանակը ներած է: Իսկ այս այցերուն առընթեամբ հարկ է աւել ցնել որ ընտանիքներու եւ կամ շահագրգռուողներու

Ու վթարսն սմոմո վժզ յայտնուի Ռոմի վսակփոռմ գիտուի ճգնատոհ հողեսդ ԱՀՏ

સુરત

զ րասմ գղղուն զո՞ւ վնդուն տեկ նորագըլիս են շվմաս ։ Մ է քուս սիտշ զ ուն զո՞ւ վնդուն  
- տակ զ ուհուհի լուշ զ ջո՞ւ վ թյա թվ վ թյուկ ։ Ա ն ը շ շ ի զ ը մ թյ կ ։ Ի ս ս զ զ ու տ ծ վ ո չ ո ւ մ զ ո՞ւ  
• ղ ։ ի կ ս լոգ չ մ ո ւն ո չ հ ո ւ ո ւ ր ո ւ ։ Ք ո ւ ս ն ս տ ե ո ւ ո ւ ց ի ն ս մ զ ն ս տ ե ն զ ո ւ ո ւ ր ո ւ ։ Զ ո ւ կ  
- ո ւ կ ի լ ո ւ ։ Մ ս տ օ գ ո ւ օ ւ ։ Վ ն դ ո ւ ն տ ե կ զ ո ւ հ ո ւ ի լ ո ւ ։ Լ ո ւ կ ի շ զ ո ւ ն ս ս կ ։ Խ ս մ զ ս ո ւ գ ո ւ օ ւ ։ Վ ո ւ յ լ  
- ո ւ վ մ ժ ։ Ն ս դ ո ւ հ ո ւ ո ւ ։ Ե ն ո ւ ո ւ գ ը լ ո ւ ս ն ե ն ե տ ։ Դ վ յ ո ւ ր ե տ մ ժ ։ Հ վ մ ր ս ։ Հ ջ ո ւ ր զ ո ւ ո ւ ։ Զ ո ւ կ ս ո ւ մ ո ւ ։ Վ վ յ ի շ ո ւ ո ւ ։  
Լ ո ւ մ վ ս ց ո ւ կ ։ Ֆ ո ւ ր ա ս կ ։ Վ թ յ ս մ թ վ ։ Մ է ք ո ւ ն զ ։ Վ լ զ մ ո ւ կ ։ Լ ո ւ գ չ մ ո ւ ն ։ Ղ ո ւ ն ս շ  
- վ ր ։ Վ ո ւ գ ո ւ յ ո ւ մ զ ո ւ ։ Ղ ։ ի կ վ ս ։ Տ ո ւ գ ո ւ յ ո ւ մ զ ո ւ ։ Ո մ ս լ ո ւ շ մ ր ։ ի կ վ ս ։ Մ է ք ո ւ ն ս ն ս ց ո ւ  
- ո ւ կ ի վ ո ւ ։ Վ կ լ ո ւ ն ս ս ։ Ղ վ ի ն զ մ զ ։ Ղ զ ։ Զ ո ւ մ վ ։ Մ է Տ ։ Վ ո ւ ո ր ։ Վ ն դ ո ւ ն տ ե կ ։ Զ ո ւ հ ո ւ ի լ ո ւ ։ Ղ վ ։  
- մ տ մ զ զ ո ւ ։ Կ վ ը լ ո ւ ս մ տ ո ւ ։ Ղ զ ։ Զ ո ւ ո ր ։ Ե ն ո ւ ո ւ գ ը լ ո ւ ս ն դ ո ւ ո ւ ։ Վ մ ս կ յ ո ւ ր ղ ։ Ղ ս մ զ զ ն մ ւ ր ս ի ս ն  
- ս ր ։ Զ ո ւ ն զ բ հ ո ւ ո ւ ր ։ Մ յ ր ։ Վ զ ո ւ շ տ օ ւ կ ։ Լ ո ւ զ չ ։ Շ ո ւ մ ի ։ Վ ս ր վ փ ո ւ մ ։ Զ ի տ ո ւ կ ։ Լ ո ւ գ չ մ ո ւ ն  
։ Մ յ ր ։ Ի ս վ խ ս ։ Հ վ մ ր ս ։ Զ վ մ ր ս ։ Զ ո ւ յ լ ։ Զ ո ւ յ լ ։ Վ կ լ ո ւ ն դ ։ Ղ վ ի վ ս ։ Մ է ք ։ Զ ո ւ ն ս ն ս ց ո ւ ։ Մ ս զ ո յ ր ո ւ մ  
- հ ո ւ մ ժ ։ Ղ ս ի մ զ ։ Ղ ի ս ը ։ Մ յ ր ։ Մ ո ւ ր ա մ տ ։ Վ ո ւ ո ր ։ Վ ո ւ ո ւ ն ս ո ւ լ ։ Ղ շ ո ւ ժ ։ Ղ զ ։ Վ ի ս մ ո ւ զ ո ւ ։ Մ մ ւ ր ս ո ւ  
- ր ո ւ ն ։ Ղ ա ս ն տ ր ո ւ կ մ զ ո ւ ։ Զ յ լ ն ս ս կ ։ Վ ո ւ ո ւ մ վ ։ Մ է Տ ։ Շ ո ւ մ ի ։ Վ ս ր վ փ ո ւ մ ։ Զ ի տ ո ւ կ ։

իսմայլոմք վզտզտնմոդ մզօ հետզուսմղ էիվ զվէվմոդ հիսմզո  
-զվնո զտեղոդ տե մզըրտնտոդ զվմուրվիոդ բոց յուստ բուժ զտմկս օ

Վազնագործ մաշտակի շախմատ ստեղծվել է 2005 թվականին:

*Si giong h' ful m' miu ilo*

Ար վժմաշ նդոգմասոօվտուն զվորք վետմտուս յորիկ հորսոն մէս զորշ

Հ Հ Յ Ո Ս Ա Ջ Շ Ո Մ Մ Թ Մ Ո Ւ Բ Ի Բ Մ Ե Վ Ո Ւ Բ Ա Մ Խ Ի Ն Ե Ր Ս Ե Ղ Մ Ո Ւ Յ Ք

— Այս առաջնահարցը պատճենաբանութեան մեջ առաջնահարց է : Այս գործութեան մեջ առաջնահարցը կազմութեան մեջ առաջնահարց է : Այս գործութեան մեջ առաջնահարցը կազմութեան մեջ առաջնահարց է :

## ՀԿԵՐՊԵՎԿԱՐԴՈՒԹ ԿՅ ՌԵԽԵՎՈՒՆ

✓

մը, Տիթրոյթի Եկեղեցեաց Խորհուրդի նախաձեռնութեամբ :

Տէր Տիրան տիառն Եղ, Գորգութեանի մասնակցութեամբ ինթրնէշընըլ հնս-թիթոյթի մէջ, ցուցարկեց Հայկական Տնօրհնէքի իսկական արարողութիւն մը, ապա անոր նշանակութեան մասին յատուկ բացատրական մը տալով:

Սուրբ Մեսրոպի Ծննդեան 1600-ամեակին առթիւ, Ամենայն Հայոց Կաթո-ղիկոս Վազգէն Ա. Հայրապետի Արքատառ կոնդակին հետեւելով, Հայ գրերու յայտնութեան մասին տրամաթիք ներկայացում մը տրուեցաւ, Դպրաց Դասու եւ Հայ Դպրոցի մասնակցութեամբ, որը գրի առնուած եւ բեմադրութեան դրուած էր Տէր Տիրանի կողմէ:

Ինչպէս կերեւի Հայ Եկեղեցին եւ Հայ ժողովուրդը օտարներուն ճանչ-ցընելու համար ջանք չէ խնայուած եւ առիթ չէ փախցուած, գեղարուես-տական բրոկրամներով, դասինոսութիւններով, ծիսական արարողութիւն-ներով, Եայլ ն:

Ասոնց կարգին տակաւին չեն յիշուած մշակութային բնոյթով այն միւս ձեռնարկները որոնք բոլորովին օժանդակ կազմակերպութեանց նախաձեռնու-թիւնը կը մնան:

#### ՕԺԱՆԴԱԿ ՄԻՈՒԹԻՒՆՔ

Զոյգ Հովիւները բաժնեցին իրենց մէջ օժանդակ միութեանց ամիջական պատասխանատուութիւնը, նախագահելով եւ ղեկավարելով զանոնք:

Կանանց կազմակերպութեան առընթեր, անհրաժեշտ նկատուելով պէտքը արանց կազմակերպութեան մը, ծուխիս մէջ կազմակերպուեցաւ Արանց Օժան-դակ Միութիւնը:

Հարկ է աւել ցնել որ բոլոր օժանդակ միութիւնները գլուխ հանեցին յաջողապէս իրենց վստահուած գործերը, եւ մեծապէս օգտակար հանդիսան Եկեղեցւոյս, բարոյապէս թէ նիւթապէս:

Մասնաւոր յիշատակութեանց հարկ է արժանացնել Եկեղեցւոյս Առաջին տարեկան մեծ պազարը (Տօնավաճառ) նորակառոյց Մշակութային տան բացման առնջութեանք որ Հսկայ յաջողութիւն մը ապահովեց Եկեղեցւոյս, կարող առաջնորդութեանը ներքեւ Տիկնայք Մարի Մանուկեանի եւ Հէլէն Մարտիկեանի, որոնք գործակցութիւնը ապահոված էին ոչ միայն Եկեղեցւոյս օժանդակ այլ նաեւ ուրիշ կազմակերպութեանց:

#### ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՔ

Ներկայացուցինք մեր Եկեղեցին Տիթրոյթի եւ Միշիկանի Եկեղեցեաց Խորհուրդին (Բառունսըլ օֆ Զըրքս) ծառայելով անոնց վարչական (Պորտօֆ Տիրէքթըրը) կազմին վըայ եւ այլ Յանձնախումբերու մէջ եւս մեր օժանդակութիւնը բերելով, իբրեւ խորհրդական:

Հրաւիրուած էինք եւ խօսք առինք Հայ ժողովական Եկեղեցւոյ Տարեկան Գոհաբանական Ցաշկերոյթին (Թէնքսկիվինկ Տէյ):

Իբրեւ Հիւր Հրաւիրուած էինք Եպիսկոպոսական Եկեղեցւոյ Միշիկանի Թեմին Եկեղեցականաց Տարեկան Պատգամաւորական ժողովին եւ այդ առթիւ տրուած ճաշկերոյթին Գրէնպրուգի մէջ: Մասնակցած ենք նաեւ օտար այլ աղաւան Եկեղեցիներու հանդիսութեանց:

Տէր Տիրան ուղղերձեց չայլ էնտ ֆարթի մէջ, ԵՄ ԱՄԵՐԻԿԱՑԻ ԵՄ ՕՐՈՒԱՆ (ԱՅ ԷՄ ԱՄԷՐԻՔԸ ՏէՅ) բրոկրամին վրայ ի դիմաց նոր քաղաքացին ներու։ Սոյն ուղղերձին կարգադրութիւնը եղած էր Տիկ Ն. Բարսեղեանի կողմէ որ չայլ էնտ ֆարթի քաղաքացիութեան թեկնածուներու Անգլերէնի վաստակաւոր ուսուցչուհին է։

Պաշտօնական յարաբերութիւնները պահուեցան այլ եկեղեցիներու եւ եկեղեցականներու հետ եւ Հանրայանին սպասարկութեանց հետ երբառիթ կը ներկայանար։

### ԵԿԵՂԵՑԱԿԱՆԱՑ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Չոյզ Հովիւներն ալ մասնակցած են Եկեղեցականաց Տարեկան գոյգ Համաժողովներուն, մին թեմական Պատգամաւորական ժողովին նախօրեակին, գումարուած ի Պոսթոն, իսկ միւսն ալ Եկեղեցականաց Ամառնային Համագումարը, գումարուած յէլ պրոն եզակէրի ֆարթ, Ն.-Ճ. Երկութին մէջ գործոն զեր ունեցած են գոյզ Հովիւները, առաջինին Ատենազիրը ըլլալով Տէր Տիրան ՔՀՆՅ. իսկ Երկրորդին ալ կազմակերպիչը ըլլալով Տէր Առնակ ՔՀՆՅ.։

### ԳՐԵՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՑ

Շաբաթօրեակ ՊՈՒԼ ԿՇԻՆը եւ ԱՄՍՈՐԵԱԿ ԵԽԱԿԱՆ ԹԵՐԹԻԿը եղող ԶԱՀԱԿԻՐԸ կանոնաւորաբար Հրատարակուած են, Յայտարարութեանց, ազդերու եւ ծանուցագիրներու հետ միասին։ Եկեղեցւոյս պաշտօնական թղթակցութիւնը եւ Յարաբերութիւնը պահուած է Առաջնորդարանին, այլ ծուխերու եւ կամ Հովիւներու հետ։

Խնդրանքի վրայ պատրաստուած են պաշտօնական նամակներ քաղաքացի-ութեան, ընկերային ապահովութեան (Սօշը Սիքիւրիթի) վերաբերմաբ։ Տրուեցան յանձնարարականներ, Ծննդեան Վկայականներ, Հաստատագիրներ, պաշտօնագիրներ, եւն.։ Ի պահանջել Հարկին ներկայացած ենք դատարաններ եւ այցելած ենք բանտեր ի նպաստ անոնց որոնք կարիքը ունեցած են մեր բարեխօսութեան կամ քաջալ երանքին։ Եկեղեցւոյս գրասենեակին յարաճուն գործերը յառաջ տարուած են կանոնաւորաբար, Եկեղեցւոյս քարտուղար Տիկ, Հէլէն Արմուտլեանի կողմէ։ Գրասենեակի աշխատանքի դիւրութեան համար պատրաստուած են Հովիւներուն կողմէ մասնաւոր Ֆորմեր։

### ՇԻՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Նոր շէնքի ընծայման գերազանցապէս յաջող ճաշկերոյթը նշեց բացումը եւ գործածութեան սկիզբը դրաւ-մեր նորակառոյց շքեղ շէնքին մեր նոր կեդրոնին Սառւթիլտի մէջ, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազանին եւ Հիւր Եկեղեցականներու։

Հոկտեմբեր 1-ի Կիրակին սկսեալ Ս. Պատարագը եւ Եկեղեցական արարութիւնները սկսան կատարուիլ նոր շէնքի մատրան մէջ։ Նմանապէս օժանդակ կազմակերպութեանց ժողովները, ձեռնարկները եւ մէկ խօսքով Եկեղեցւոյս բովանդակ գործունէութիւնը փոխադրուեցաւ մեր նոր կեդրոնաւողին։

Շինարարութեանց առընթեր կը փափաքինք աւելցնել նաեւ չայկական գերեզմանատան մասին որով օժոււեցաւ գաղութս։ Հայկական գերեզմանատան թաղամասը Վուտլ օնի մէջ, օրէնուեցաւ Ապրիլին ի ներկայութեան գերեզմանատան Յանձնախումբին եւ ծխականներու։

### ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԽԱՀԱՏԱՄԲ

Շէնքի բացման առթիւ տրուած ճաշկերոյթին ընթացքին, Մեր Համայնքի գոյգ ղեկավարներուն, Տիազք Ալէք Մանուկեանի եւ Եղուարդ Մարտիկեանի պաշտօնապէս յանձնուեցան՝ Ճեռամբ Առաջնորդ Սրբազնին, Հայրապետական Օրհնութեան եւ Կնահատանքի կոնդակներ, Սուբբե Գրիգոր Լուսաւորչի Առաջին կարգի շքանշանով իրենց պարգեւատութեան առնջութեամբ, զորս ստացեր էին Հայրապետին Տիթրոյթ ըրած պատմական այցելութեան առթիւ նախանցեալ տարի, 1960-ին։

Նմանապէս լեւոն Աւագ Սարկաւագ Զէնեան ստացաւ Հայրապետական Օրհնութեան կոնդակ ի գնահատութիւն իր բազմամեայ վաստակին կրօնական դաստիարակութեան մարզէն ներս։

Տէր Առնակ ՔՀՆՅ, արժանացաւ Հայրապետական շնորհաբաշխութեան Բահանայական Լանջախաչի տուչութեամբ, բարեխօսութեամբ Առաջնորդ Սրբազն Հօր։

Մեր Համայնքը երջանիկ է իր արժանաւոր անդամներով եւ զաւակներով այս յիշատակելի պարգեւատութեանց առթիւ։

### ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Զոյգ Հովիւներն ալ Տէր Առնակ եւ Տէր Տիրան Զահանայ Հայրերը առիթ եւ պատեհութիւն ունեցան կազմակերպելու ուխտագնացութեան խումբեր դէպի Հայրենիք եւ Սուբբե Էջմիածին, 1960-ին եւ 1961-ին յաջորդաբար։

Տէր Առնակ իր վերադարձին ցուցուց իր առած պատկերները (սլայտս) ժողովուրդին եւ օժանդակ կազմակերպութեանց զանազան առիթներով։ Ցուցադրութիւններէն մին ալ տեղի ունեցաւ Խնթըրնէշը նույնական հնսթիթուտ։

Իսկ Տէր Տիրան ՔՀՆՅի դէպի արտասահման կատարած ճամբորդութեան յիշատակելի անցքերը եղան հետեւեալ ները։

Տէր Հայրը անմոռանալ ի առիթը ունեցաւ Ս. Պատարագ մատուցանելու եւ քարոզելու էջմիածնայ Մայ Տաճարին մէջ, ի ներկայութեան վեհափառ Հայրապետին եւ միաբան Հայրերու։ Այդ առիթիւ Տէր Տիրան բացառիկ առանձնաշնորհումը ունեցաւ ստանալով Վեհափառ Հայրապետէն իբրեւ անձնական յիշատակ աղամանդակուր եւ ոսկեայ Ձեռաց Խաչ մը, ի գնահատութիւն եւ ի քաջալերանք։

Տէր Տիրան Կ, Պոլսոյ մէջ մասնակցեցաւ Գարեգին Արք, Խաչատուր-եան Պատրիարքի պատմական թաղումին, ընդ նախագահութեամբ Վեհափառ Հայրապետին։

Տէր Տիրան դարձեալ Երուսաղէմի մէջ առիթ ունեցաւ պատարագելու եւ քարոզելու Ս. Յարութեան տաճարին մէջ, ի ներկայութեան միաբանութեան։

Իր վերադարձին Տէր Տիրան ցուցուց իր բաշած լուսապատկերները (սլայտ) եւ զասախօսեց իր ճամբորդութեան տպաւորութեան մասին զանազան խումբերուն եւ կազմակերպութեանց, որոնցմէ մին ալ Խնթըրնէշը նույնական հնսթիթութիւն մէջ։

### ՀՈՎՈՒԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

Դեկտեմբերի վերջերը Տէրը Արանք ՔՇՆՅ. Առաջնորդ Սրբազան Հօր կարգադրութեամբ նշանակուեցաւը նորմ Պը Ըկը Գառնիթի, նիւ Ճըրգի նահանգի, նորակազմ Համայքին: Նոյն ատեն Տէր Տիրան Հայր Եղաւ պատասխանատու Հովիւը Տիթրոյթի Համայքին:

### ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՒ ԾԽՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Մեր Տէրը կանչած է իր բոլոր Հաւատարիմ ծառաները գործելու Համար իր այգին մէջ որ եկեղեցին է: Մենք բարեբախտ ենք որ Մեր Համայնքին մէջ կը գտնուի ին բացառիկ կարողութեանց տէր եկեղեցասէր եւ ազգասէր անհատականութիւններ եւ ղեկավարներ: Կան անշուշտ բազմաթիւ ուրիշ անհատներ որոնց գործերը եկեղեցւոյ աճման Համար շատ էական դեր կատարած են, բայց որոնց անունները ի վիճակի չենք եղած յիշել անոնց պաշտօնապէս հրապարակաւ շնորհակալութիւն յայտնելու Համար: Աստուած շնորհէ անոնց բոլորին ուժ եւ նուիրում շարունակելու Համար իրենց Աստուածահանոյ գործերը ի պայծառութիւն եկեղեցւոյս:

Կուզենք շնորհակալութեամբ յիշատակել այն սքանչելի ծառայութիւնը որ կը տրուի եկեղեցւոյս օժանդակ միութեանց կողմէ, իրենց կարող Աստեղապետներու ղեկավարութեան տակ:

Մասնաւորաբար կը փափաքինք շնորհակալութեամբ յիշատակել շինութեան այն հրաշալի գործը որ յարանուն թափով յառաջ կը տարուի ծխական Համայնքիս մէջ Աբոսթոլի իթ Սոսայէթի կողմէն, Տիարք Եղ. Մարտիկեանի եւ Ա. Մանուկեանի գերազանց ղեկավարութեան ներքեւ: Շինութեան առաջին երեսը, այսինքն զպրոցաշինութիւնը արդէն իր աւարտին Հասած է եւ Մասնաւորաբար մէջ կանգնած շնորհ Հայուն վարկը առաւել բարձրացուցած է յաչս հօտարներու:

Ծխական նորհուրդը, որուն ուսերուն կիյնայ առաւելագոյն չափով նկեղեցւոյ բեռան ծանրութիւնը, կատարած է սքանչելի գործ, ներդաշնակ գործակցութեամբ, Տիար Մարթին Աբգարեանի անձնուէր եւ եռանդուն Աստեղապետութեանը ներքեւ:

1962-ը պիտի ըլլայ Տիրոջ շնորհիւ նկեղեցւոյ կառուցման տարին: Ամենուն շերեռանդ աղօթքը եւ նախանձախնդիր ջանքերը անհրաժեշտ պիտի ըլլան մեր շինարարութեան ծրագրին այս երկրորդ երեսը իր աւարտին հասցնելու Համար պատուաւորապէս: Մենք բոլորս վճռած ենք որ պյս նոր շինուելիք եկեղեցին ըլլայ ամենագեղեցիկը բովանդակ Ամերիկայի մէջ:

### ՎԵՐ ԶԱԲԱՆ

Կաղօթենք որ Աստուած լեցնէ իւրաքանչիւրիս սիրտն ու միտքը մեր Հայրերու սուրբ հաւատքով, սէրով ու շնորհքով, կերտելու Համար Աստուածու թագաւորութիւնը մեր եկեղեցիէն եւ ծխական Համայնքէն ներս:

Աղօթեցէք որ Աստուած իր շնորհքովն ու իմաստութեամբ առատացնէ իր խոնարհ ծառան, ուղիղ կերպով առաջնորդելու Համար, ուղիղ կերպով առաջնորդելու Համար ձեզ, իր հոգեւոր պարտականութեանց ճամբուն վրայ, Աստուածոյ փառքին եւ մեր հոգեւոր մայրը Հանդիսացող Սուրբ եկեղեցւոյն պայծառացման սիրոյն:

Թրղ. Աստղիած անսասան պահէ Մայր Աթոռ Սուրբ էջմիածինը իր Վեհա-  
շնորհ գահակալով՝ Եւ Ամֆրիկակայ Անագնորդական Աթոռը իր Առաջնորդով,  
Եւ Խաեւ պահէ իր Աստուածային Նախաժոնամութեան Ներքու մեր Սուրբ Յով-  
հանսէս Մկրտիչ Ակեղեցին իր համայն հօտով:

16 Փետրուար, 1962

Սառւթիլտ, Միշիկան

Տ. Տիրան ՔՀՆՅ. Փափազեան  
Ս. Յովհաննէս Մկրտիչ ԿԿԵՂԵՑԼՈՅ  
Սեծագոյն Տիթրոյթի

My dear and much-loved wife  
Mrs. Anna and our children by  
Yelizayet Galimyan, Artyukhyan  
Dr. Vartanagirine Vartanyan to  
Fayez Galimyan your February.  
A short while — you know  
to recommendable an impression of  
etc etc Dr. Vartan Galimyan  
which wrote to us by his:

For Dr. Dr. Dr. Dr.

100% of the time. I am not able to do this because I have to go to work every day. I am not able to do this because I have to go to work every day. I am not able to do this because I have to go to work every day. I am not able to do this because I have to go to work every day. I am not able to do this because I have to go to work every day.

John - 2000

100% of the time. I am not able to do this because I have to go to work every day. I am not able to do this because I have to go to work every day. I am not able to do this because I have to go to work every day. I am not able to do this because I have to go to work every day. I am not able to do this because I have to go to work every day.